ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/17236-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 2024 թվականի մայիսի 2-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-793-07.03.2024-ՏՀ-011/1) (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկները:

Առաջարկում ենք՝

1) նախագծով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելու փոխարեն այդ մասն ուժը կորցրած ճանաչել,

2) նույն հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների տեխնիկական զննությունն իրականացվում է հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով ընթացիկ հարկային տարվան նախորդող հաշվետու տարիների համար հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունները:»,

3) նախագծի հետագա քննարկումների շրջանակներում քննարկել փոխադրամիջոցների գույքահարկի, ինչպես նաև անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների հաշվեգրումը (ձևավորումը) ամսական կտրվածքով կատարելու նպատակահարմարության հարցը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ